

է՝ աղջկան հարսնութեան տալ իւր վաղեմի ծանօթ վաճառական Իսալի Մինէիլին։ Մինչդեռ Կատարինէն, հետեւելով իւր հակումներին, սիրահարուում է ուսուցիչ՝ Նորաւարտ համալսարանական Սարգսի վերաջ և սկըսում է հօր ցանկութեան դէմ գնալ։— Հալլը, բարկանալով աղջկայ վերան՝ «դուրս է հրում Կատարինէին տնից դուրս և դուռը փակում վերան»։

Դուրսը մթնում է. իսկ տան դուռը չի բացւում։ Յանկարծ «չորս անծանօթ ձեռքեր չափշտակում են Նորան» և տանում գինեւոռն։

Կատարինէն երեք օրից չետոյ մտնում է։ Սոլոմօն Պետրովիչը՝ չը կարողանալով տանել աղջկայ մահը և իւր սնանկութիւնը՝ կաթւած է ստանում։ Քեթեանը «կորչում է ամենօրեայ կեանքի անկապտութեան մէջ»։ Սարգիսը՝ մի քանիսի ասելով՝ խելագարւում է, իսկ միւսները հա-

ւատացնելով՝ թողնում է Թիֆլիսը և քաշւում է արտասահման։

Պ. Մարաղեանը պատմում է թէ ինչպէս պատրաստուեց աղ սարսափելի արկածքը։ Նա նեղութիւն է տալիս իրան նկարագրելու Սարգսի և Կատարինէի սիրահարութիւնը։ Սոլոմօն Պետրովիչի և Իսալի Մինէի չի առևտրական քաղաքականութիւնը և ալլն։

Ճշմարիտ է, դրքովում չիշատակւած անցքերը նկարագրւած են շատ սովորական ձևով, բնաւորութիւնները նկարւած են թույլ կերպով, պատմութեան գլխաւոր իմաստը շատ ծամծամ է... Բայց գոնէ անհամոզւածները կարող են վերջապէս համոզւել ամենականներն կերպով, որ ծնողները չը պէտք է իրանց զաւակները ամուսնացնելու խնդրում ինքն-իրան վարւին։

Ա. ԲԼ.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

1) ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ ԲԺՆԿԱՊԿԱՆ (ՂՂԱՐԵՅԻ)՝ «ՄԱՆՈՒԿ-ՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆ-ՆԵՐԸ» Արտատպած «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, տպարան Մ. Ռօտի-նեանցի, 1889 թ., գինն է 5 կոպ.։ (Արդիւնքը հեղինակի կողմից չառկացրած է «Մուրճ»-ի փոխատու-խնայողական Գանձարանին)։

2) ՉՄՇԿԵԱՆ ՄԱԿԱՐ՝ «ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑ» 1890 թւականին Քրիստոսի. Թիֆլիս, տպարան Մ. Ռօտինեանցի, 1889 թ.։ Գինն է 15 կոպէկ։

3) «ՍՈԿՐԱՏԷՍ», Թարգմանութիւն օր. Թեկլի ՍՏԵՓՈՅԵԱՆԻ, հրատարակութիւն Թիֆլիսի Ընկեր. Հայերէն Գրքերի հրատարակութեան. Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1889 թ. գինն է 10 կոպ. ամեն տեղ։